

09.05.2017թ.

Սևան համայնքի ղեկավար Ս. Մուրադյանի շնորհավորական ուղերձը Հաղթանակի և
խաղաղության օրվա առթիվ

Հարգելի համաքաղաքացիներ,

Կրկին մայիսյան եռատունն է մեկտեղել հայ ժողովրդի նվիրական երազանքներն ու նպատակները, որն ամփոփում է խաղաղության, անվտանգության, հաղթանակների խորհուրդը:

72 տարի է մեզ բաժանում Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակից, որը դարձավ 20-րդ դարում մեր ժողովրդի ինքնահաստատման և լինելիության փորձաքարը:

Տասնամյակների հեռվից ավելի են արժևորվում մեր հայրերի ու պապերի գործած սխրանքները և հերոսացումը: Հայ ժողովուրդը տվեց հերոսներ ու գեներալներ, նվիրաբերեց ամենաթանկը՝ իր զավակների կյանքը:

Մեծ հաղթանակը նվաճած զինվորների շարքերը նոսրացել են, որոնցից 4-ը Սևան համայնքի բնակիչներ են՝ պատերազմի ճանապարհներն անցած, հաղթանակը կերտած, ալեգարդ, տասնամյակների բեռն ուսած մարդիկ:

Անցյալ դարի 90-ական թվականներին հայրենիքի պաշտպանությունը կրկին դարձավ օրախնդիր: Պարտադրված պատերազմը ոտքի հանեց Մեծ հայրենականի զինվորների որդիներին և թոռներին: Հայ տղաները դարձան երկարապահ ու մահապարտ, ազատամարտիկ և հայոց նորօրյա բանակի առաջին զինվորները:

25 տարի առաջ Հայրենական Մեծ պատերազմի հաղթական օրն ազատագրվեց Շուշի բերդաքաղաքը: Չնայած հակառակորդի՝ մարդկային և զինտեխնիկայի գերակշռությանը՝ հայ հերոսների արիության և փայլուն մարտավարության շնորհիվ մայիսի 9-ին Շուշիում մեր տղաները կրկնեցին իրենց պապերի ու հայրերի սխրանքը՝ գրելով հայ ժողովրդի փառապանծ պատմության ևս մեկ էջը, որը պսակված էր հայորդիների խիզախությամբ, կամքով, վճռականությամբ:

Երկիրն ուժեղ է իր զավակներով, անպարտ՝ երկիրը պահող ու այդ երկրի համար սեփական արյունը տվող մարդկանցով: Մեր հաղթանակները կրկին ապացուցեցին, որ հայրենասիրությունը գործողություն է, նվիրում, պայքար, սխրանք և հերոսացում:

Փառք նրանց, ովքեր ընկան մարտի դաշտերում՝ փրկելով հող հայրենին:

Փառք սևանցի տղաներին, որոնք իրենց կյանքի գնով, իմացյալ մահով մեզ նվիրեցին ամենաթանկը՝ խաղաղ ապրելու իրավունքը:

Փոխվում են ժամանակները, սակայն գերակա է մնում անվտանգության և խաղաղության խնդիրը: Մեր պետության համար անվտանգության և խաղաղության պահպանումը, ներքին և արտաքին հավասարակշռված քաղաքականություն վարելը միշտ քաղաքական օրակարգում են, որոնց երաշխիքները մարտունակ և կայացած բանակն է, մեր ժողովրդի համար անվտանգ կյանք ապահովող ամենօրյա աշխատանքն ու ծրագրերը:

Հայոց բանակում ծառայող մեր տղաներն էլ քաջ գիտակցում են, որ հայրենիքի սահմանների պաշտպանությունն իրենց պատիվն է և այդ ապացուցում են իրենց օրինակելի ծառայությամբ:

Մեր փխրուն խաղաղությունը կարող է վտանգվել ամեն պահ հակառակորդի կողմից պարտադրված պատերազմի ու մարտական գործողությունների միջոցով, սակայն ինչպես տասնամյակներ առաջ, այնպես էլ այսօր այն ստացել և ստանալու է արժանի հակահարված, որովհետև մեզ համար թանկ է այն ամենը, ինչ ձեռք ենք բերել արյան գնով:

Միրելի վետերաններ, Արցախյան հերոսամարտի մասնակիցներ, հայ ժողովրդի անձնուրաց զավակներ, բոլոր ժամանակների մեր հերոսներ,

Դուք այսօր էլ օրինակ եք երիտասարդների համար, և պատմության հերոսական էջերը հպարտությամբ ենք թերթում նաև ձեր գործած սխրանքների շնորհիվ:

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքի ավագանու անունից շնորհավորում եմ բոլորիս Հաղթանակի և խաղաղության օրվա առթիվ:

Թող մեր ժողովրդի փառապանձ հաղթանակները ուղեկցեն մեզ՝ պարզևեղով հպարտության զգացում, իմաստավորելով մեր այսօրն ու վաղը:

Մայիսը, որ մեզ համար հաղթանակների ամիս է՝ սրբագործված տարբեր դարերում, այսօր էլ յուրաքանչյուր հայի համար ուժի, լավատեսության, խաղաղության խորհուրդն է ամփոփում իր մեջ:

Միրելի հայրենակիցներ

Մայիսյան եռատոնը թող դառնա հայ ժողովրդի անպարտելիության վավերագիրը, իսկ ձեզ մաղթում եմ առողջություն, արևշատություն, բարեկեցիկ կյանք, խաղաղ ու անամպ երկինք, սեփական հայրենիքում ապրելու ու արարելու մեծագույն բերկրանք: